«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ **Ընթերցանությունը որպես ուսուցման գործիք տարրական դպրոցում**

Առարկան՝ **Տարրական դպրոց**

Հետազոտող ուսուցիչ՝ **Ավետյան Աննա**

Ուսումնական հաստատություն՝<<Ալավերդու թիվ 12 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ

Երևան 2022

Բովանդակություն

- Ներածություն----------3
- **Գլուխ 1.** Ինչպե՞ս ձևավորել հետաքրքրություն ընթերցանության հանդեպ----------4
- **Գլուխ 2.** Ընթերցանության դասերին կիրառվող մեթոդները----------12
- Եզրակացություն----------18
- Գրականության ցանկ----------19

Ներածություն

Ընթերցանությունը մտքի համար նույնն է, ինչ ֆիզիկական վարժությունները՝ մարմնի:

Ադիսոն

Ընթերցանությունը գիտելիքների ձեռք բերման, բազմակողմանի զարգացման, բառապաշարի հարստացման հիմնական աղբյուր է: Կարդալու միջոցով հարստանում ու զարգանում են աշակերտների երևակայությունը, հոգեկան ներաշխարհը, խոսքը, ճաշակը: Այն նաև օգնում է մարդուն ուրիշների գործունեության ուսումնասիրման ճանապարհով ճանաչել կյանքը, հասկանալ նրա խորհուրդները և սովորել ուրիշի սխալների վրա: Այս է պատճառը , որ մանկավարժներն ու մեթոդիստները ամեն ինչ անում են սերունդների մեջ ընթերցողական կարողությունների մշակման, ընթերցասիրության դաստիարակության համար: Այս կարևոր խնդրի լուծման ճանապարհին հիմնականը կարդալու հմտությունների զարգացումն է, որի շնորհիվ աշակերտը հաղորդակից է դառնում մայրենի լեզվի հարստություններին և ձեռք բերում գրքերի աշխարհը թափանցելու

բանալին:

Ցավոք, այսօր մեր աշակերտները կարդում են դժկամությամբ՝ գերադասելով համակարգիչը: Նրանք ոչ միայն գեղարվեստական գրականություն չեն կարդում, այլև ընդհանրապես չեն կարդում: Ի՞նչ անել, որ երեխաները սիրեն ու կարդան գիրքը, հրաժարվեն համակարգչից և նախապատվությունը տան գրքին:

Ինչպե՞ս ձևավորել հետաքրքրություն ընթերցանության հանդեպ

Ընթերցանության հիմնախնդիրները միշտ էլ արդիական են եղել: Այն հուզել և հուզում է բազմաթիվ մասնագետների:

Մանկավարժական գործունեության մեջ նշվում է. << Կարդալ չսիրող, գրքի, հեքիաթի, պատմվածքի ունկնդրման և ընթերցման նկատմամբ ի սկզբանե անտարբեր երեխաներ չեն լինում: Պարզապես անհաաժեշտ է մանկական ընթերցանության մանկավարշորեն ճիշտ ը նպատակային կազմակերպում >>[2, էջ 22] :

Որպեսզի երեխան սիրի գիրքը և կարդա, պետք է ուսուցիչը լավ կարդալ սովորեցնի աշակերտներին ու օգնի նրանց հաղթահարելու կարդալու ընթացքում առաջացած դժվարությունները:

Ա. Ղարիբյանը ժամանակին ասել է. << Բացատրական ընթերցանության հիմնական նպատակներից է կարդալ սովորեցնելը, որովհետև կարդալու ուսուցումը լեզվի ուսուցման ամենահիմնական և պատասխանատու բաժինն է: Թե լեզվի մյուս բաժինների և թե միջնակարգի բոլոր այլ առարկաների յուրացումն ապահովում է աշակերտի կարդալու հմտությամբ: Անհնարին է ծանոթանալ որևէ գիտության հիմունքների, առավել ևս դառնալ ժամանակակից կուլտուրայի պահանջների բարձրության վրա կանգնած

մարդ, եթե կարդալ չգիտես: Շատ վաղ անցյալում ուսուցման միակ առարկան կարդալու ուսուցումն էր: Հետագայում երբ զարգացան առանձին գիտությունները, երբ ստեղծվեց ուսուցման դպրոցական համակարգն իր բազմազան առարկաներով, կարդալը դարձավ այլ գիտություններին տիրապետելու, կուլտուրայի և տեխնիկայի բոլոր նվաճումները յուրացնելու ամենահիմնական միջոցը: Կարդալու ուսուցման որակից է կախված մյուսառարկաների ուսուցման հաջողությունը, իսկ կարդալու հմտության հիմնական որակը որոշում է կարդալու ուսուցմամբ տարրական դասարաններում >> [7, էջ 78-79] :

Կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողությունների զարգացումը նպաստում է ուսուցման արդյութավետությաննբարձրացմանը: Ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ կարդացող աշակերտներն ավելի լավ են սովորում ցանկացած առարկա, քան կցկտուր կարդացողները: Վատ կարդացողն ընթերցելիս իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացնում է կարդալու գործողությանը և չի ըմբռնում կարդացածի բովանդակությունը, հիմնական միտքը: Լավ կարդացողն արագ է ըմբռնում, հասկանում բնագիրը, որովհետև նա ժամանակ չի ծախսում կարդալու գործողության վրա: Այս դժվարությունն ավելի նկատելի է դառնում միջին դպրոցում, երբ աշակերտներն սկսում են յուրացնել ինչպես բնական գիտությունները, այնպես էլ հումանիտար առարկաները: Վատ կարդացողը, որը դեռևս կարդալ չի սովորել և չի տարբերակում կարդացածի գլխավոր ու երկրորդական մմտքերը, չի կարողանում տեքստի շուրջ վերլուծական-համադրական աշխատանք կատարել, ըմբռնել նյութի տրամաբանությունը, հետևաբար դժվարանում է ճիշտ և հասկանալով վերարտադրել: Հենց այս պատճառով աշակերտն սկսուն է չսիրել և այդ առարկան, և այն դասավանդող ուսուցչին:

Ընթերցանության նկատմամբ հետաքրքրասիրություն աշակերտների մեջ պետք է առաջացնել դեռևս առաջին դասարանից, որովհետև մանուկներին գրքին կապելն ավելի հեշտ է քան երիտասարդներին: Այդ իսկ պատճառով այբբենարանն ավարտելուց հետո անգամ գրաճանաչության ընթացքում,

պետք է փոքրիկների համար կարդալ հետաքրքիր հեքիաթներ և իրենց նույնպես դրդել՝ դրանք կարդալ, հետաքրքրություն առաջացնել կարդալու նկատմամբ: Դա դասվարի գլխավոր խնդրին է:

Գրաճանաչության ուսուցման շրջանում ձևավորվում է կարդալու նախնական կարողությունները: Այս շրջանում պետք է հոգ տանել թե տառերին ծանոթանալու և թե կարդալու տեխնիկային տիրապետել տալու մասին: [7, էջ 78-79]

Ուսուցիչներից ոմանք կարծում են, ու կարդալ չսիրելու պատճառներից է նաև դասի ժամանակ աշակերտներին առաջինը կարդալու հնարավորությունից զրկելը: Երեխաները միշտ առաջին ընթերցումը լսում են իրենց ուսուցչի կողմից կամ պատմելով ինչի պատճառով էլ ժամանակի ընթացքում նրանց մոտ ձևավորվում է կարդացածը չհասկանալու կայուն սինդրոմը: [3, էջ 64]: Եվ երբ որևէ ուսուցիչ ինչ-որ պատճառով չի հասցնում դասը պատմել, երեխաները պատճառաբանում են , որ իրենք չեն հասկացել: Միգուցե կարդացել են, բայց արդեն նրանց մեջ ձձևավորվել է այն դիրքորոշումը, որ ինքնուրույն կարդալով՝ նրանք չեն կարող որևէ բան հասկանալ ու մեկնաբանել: Իսկ այս զգացումն ազդում է ոչ միայն կարդալու, այլև սովորելու, մտածելու ինքնավստահության կարողությունների ձևավորման վրա:

Առաջին հերթին աշակերտներին կարդալ սովորեցնելու համար պետք է առաջարկել ոչ միայն դասագրքի նյութերը, այլև՝ անծանոթ տեքստեր:Շատերը կարծում են, որ կարդալ սովորեցնելը դասվարի խնդիրն է միայն: Եվ հաճախ են մեղադրում դասվարին երեխաներին կարդալ չսովորեցնելու համար: Բայց դա ճիշտ չէ: Կարդալու կարողության ձևավորմանը և ճիշտ կարդալուն պետք է հետևեն տվյալ դասարանում դասավանդող բոլոր ուսուցիչները: Այնինչ, շատերի կարծիքով՝ դա իրենց առարկայի խնդիրը չէ, և ավելորդ ժամանակ չեն վատնում դրա վրա: Փաստ է, որ ընթերցողական հմտություններ ունեցող աշակերտի ձևավորման արդյունավետության բարձրացումը նպաստում է առարկայական ծրագրերի

կատարմանը: Հարկավոր է նախ սովորեցնել հաղթահարել ընթերցանության շատ բնական բարդությունները:

Աշակերտն առաջին հերթին պետք է հոգեբանորեն պատրաստ լինի և իր մեջ ձևավորի այն համոզմունքը, որ ինքը նոր նյութը՝ հեշտ, թե դժվար, կարող է կարդալ: Ըստ Ջ. Գյուլամիրյանի՝ աշակերտը կարդալ սովորում է ոչ թե նույն նյութը բազմակի ընթերցելով, այլ անծանոթ նյութերի անընդհատ ըաթերցմամբ: [1, էջ 128]

Ընթերցողական կարողությունները ձևավորվում են աստիճանաբար: Միաժամանակ դրանք բնութագրվում են իբրև աշակերտների՝ գեղարվես-տական երկի բովանդակության մեջ խորամուխ լինելու կարողություններ և չեն կարող առանձնացվել խոսքային կարողություններից ու դիտարկվել անկախ: Բանն այն է, որ ներքին և արտաքին խոսքն անընդհատ ուղեկցվում է մտային բոլոր այն գործողություններով, որոնք վերաբերում են ընթերցողա- կան կարողություններին:

Երեխան մարդուն և աշխարհը ճանաչում է նաև գեղարվեստական ստեղծագործությունների ընթերցման շնորհիվ: Այդ կերպ նա ձեռք է բերում աշխարհաճանաչողական տեղեկություններ, թափանցում մարդու հոգեկանի բարդ ու նուրբ ոլորտները, իմաստավորում դրանք և սովորում ճիշտ ապրել:

Երբեմն երեխան դժվարանում է խնդիր լուծել, որովհետև չի կարողանում այն ճիշտ կարդալ: Գրագետ խոսքի ընկալումն ու կառուցումը նույնպես կապված են կարդալու կարողության հետ: Այն կատարելության պետք է հասցնել դեռևս տարրական դասարաններում:

Շատերը սխալմամաբ կարծում են, թե ցանկացած ընթերցանություն օգտակար է: Ոմանք էլ գտնում են, որ այդ գործընթացին պետք է հետևեն միայն ուսուցիչները:Սակայն վերջիններս ոչ միշտ են կարողանում երեխային հեռու պահել այդ գրքերից, որոնք նրա համար չեն նախատեսված: Երեխա-ների մեջ ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն ձևավորելու իմաստով անփոխարինելի է ուսուցչի և ծնողի դերը, քանի որ ընթերցումն իրականացվում է թետանը, թե դպրոցում: Կարևոր է, որ ակտիվ ընթերցանությունը դառնա բնավորության գիծ:

Ծնողները երբեմն հպարտանում են, որ երեխաները հաճույքով են կարդում իրենց տարիքին չհամապատասխանող գրքեր:Սակայն սա այնքան էլ օգտակար չէ, հատկապես՝ կրտսեր դպրոցականների համար:Այդ տարիքի երեխաները գեղարվեստական ստեղծագործությունն ընկալում են մակերեսորեմ, հետևում են գլխավոր կերպարի զարգացմանը և ըմբռնում միայն գրքի հիմնական բովանդակությունը՝ առանց կարևորելու բնորթյան նկարագրությունները, հերոսների բնութագրերը և հեղինակի բուն ասելիքը: Հարկավոր է հետևել, որ երեխաների կողմից ընթերցվող գրքերը լինեն բազմաբնույթ թեմաներով:Հատկապես անհրաժեշտ է ուշադրություն դարձնել գիտահանրամատչելի գրականության հանդեպ հետաքրքրության ձևավորմանը:

3-4 տարեկան երեխային արդեն կարելի է ծանոթացնել մանկական գրքերին: Դրանք հիմնականում պատկերազարդ են, և երեխան նկարազար-դումների միջոցով ու մեծերի օգնությամբ կարողանում է բացահայտել դրանց իմաստը: այնուհետև ցանկություն է առաջանում լսել և իմանալ բուն տեքստը:Այդ տարիքի մանկան համար պեռք է ընտրել այնպիսի գրքեր, որոնց եթե ոչ բոլոր բառերն ու արտահայտությունները, գոնե դրանց մեծ մասը ծանոթ լինի երեխային: Իսկ եթե հանդիպում են անծանոթ բառեր, ապա հարկավոր է մատչելի ձևով բացատրել, իսկ հետո ստուգել, թե ինչպես է նա հասկացել դրանց իմաստը: Եթե գրքի բովանդակությունը երեխայի համար մատչելի չէ, ուրեմն հասկանալի պատճառով նրա մեջ ցանկություն չի առաջանա շարունակել ընթերցումը: Իսկ մատչելի գիրքը երեխայի մեջ նորանոր հետաքրքրություններ է առաջացնում և հարգալից վերաբերմունք ձևավորում գրքի ու ընթերցանության հանդեպ:

Գրքի նկատմամաբ սիրո արթնացման իմաստով դրական դեր կարող են խաղալ առաջին հայացքից աչքի չընկնող, գրեթե աննկատելի պահերը: Այսպես, օրինակ, անձնական գրադարանի առկայությունը կամ ուղղակի գրապահարանները, ընկերների հետ գրքերի փոխանակումները գրքի նկատմամբ տևական հետաքրքրության ձևավորման հնարավորություն են ստեղծում:

Ընթերցելու ժամանակ անհրաժեշտ է ձայնի տպավորիչ երանգով հաղորդել հերոսի ապրումների յուրահատուկ կողմերն ու արտահայտչական միջոցների առանձնահատկությունները: Այս դեպքում երեխան կարդացողի դեմքի արտահայտությունից և արտասանության հնչերանգից գուշակում է հերոսի ձգտումներն ու նպատակները:

Պետք է հասնել այն բանին, որ երեխաներն աստիճանաբար հմտանան ինքնուրույն կարդալու մեջ: Նախ անհրաժեշտ է գրքի բովանդակության շուրջ հարց տալու, լսածի բովանդակությունը երեխայի կողմից վերապատմելու միջոցով խթանել ընթերցողի հետաքրքրությունը: ինքնուրույն ընթերցանու-

թյան համար հաճույք, ուրախություն և հետաքրքրություն առաջացնող գրքերի ընտրությունը նույնպես շատ կարևոր է: Եթե ընթերցանությունը երեխայի համար տպավորիչ և հրապուրիչ լինի, ինչպես խաղը, ապա նա սիրով և հաճույքով կկարդա և կընկալի կարդացածի բովանդակությունը:Կարևոր է նաև, որ ընտրված գիրքը համապատասխանի սկսնակ ընթերցողի հակում-

ներին և տարիքային առանձնահատկություններին: Յուրաքանչյուր երեխա ունի իր հետաքրքրությունները, որոնք պետք է հաշվի առնել ինքնուրույն ընթերցանության ունակություններ զարգացնելու համար:

Ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն կարող են առաջացնել թատրոնը, կինոն, երգն ու երաժշտությունը: Կարդացած գրքի կամ դիտած ներկայացմանը, կինոյի հեռուստահաղորդման համատեղ քննարկումները երեխային ստիպում են խորությամբ թափանցել ստեղծագործության բովանդակության մեջ, ճիշտ ընկալել և գնահատել հեղինակի արվեստի ուժն ու գեղեցկությունը:

Երեխաներից շատերն օգտվում են դպրոցական և քաղաքային գրադարան-

ներից: Մեծ մասն ունի անձնական գրադարան, սակայն երբեմն կարդում են այն, ինչ՝ ավագ եղբայրներն ու քույրերը : Հաճախ էլ երեխայի ձեռքն է ընկնում մեծածավալ վեպ կամ վիպակ, որոնք նա ոչ թե կարդում, այլ թերթում է: Այդպիսի ընթերցանությունը ձանձրալի է ու անարդյունավետ:

Ցանկալի կլին, ու երեխան կազմի իր ընթերցասիրական կենսագրությունը, նշելով, թե երբ ինչ գիրք է կարդացել ու ինչ տպավորու-
թյուն ստացել դրանից: Կարևոր է նաև կարդացած գրքի բովանդակության մասին գրառումներ կատարելը: Գրառում կատարելը երեխային պարտավորեցնում է մտածել, լուրջ վերաբերվել ընթերցանությանը, իմաստավորել կարդացածը, բացահայտել, թե տվյալ գիրքը հատկապես ինչու է դուր գալիս: Կարելի է նաև ընթերցողի օրագիր ունենալ: Ճիշտ է, կրտսեր դպրոցականը կդժվարանա դրան հետևել, բայց նրան կարող է օգնել ծնողը: Կրտսեր դպրոցականների համար դաստիարակչական մեծ նշանակություն ունի գրքի պատկերազարդումների դիտումը: Այն օգնում է երեխային հասկա-
նալ և հիշել կարդացածը: Շատ պատկերազարդումներ հնարավորություն են տալիս պատկերացնել բնության այնպիսի երևույթներ ու առարկաներ, որոնք երեխան չի կարող տեսնել անմիջականորեն:

Անհրաժեշտ է երեխայից պահանջել, որ նա հիշի գրքի վերնագիրը, հեղինակի անուն, ազգանունը:

Ընթերցանությունից առաջ կարելի է հարցնել, թե տվյալ հեղինակի ուրիշ ինչ ստեղծագործություններ է կարդացել կամ լսել, ինչ գիտի նրա մասին:

Երեխան պետք է կարդա ուշադիր, առանց շտապելու: Հաճախ մի քանի էջ կարդալուց հետո նա փնտրում է գրքի վերջին էջը՝ տեսնելու, թե ինչպես է այն ավարտվում: Այս դեպքում, իմանալով հերոսների ճակատագրերը, նվազում է հետաքրքրությունը ընթերցանության հանդեպ, և բաց են թողնվում ամբողջական պարբերություններ : Անհրաժեշտ է հետևել, որ երեխաների մոտ բացառվի այդ սովորությունը:

Ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն կարելի է ձևավորել կարդացած գրքի շուրջ զրույցների միջոցով՝ ուսուցիչների , երեխաների և ծնողների մասնակցությամբ: Դրանք դաստիարակչական նշանակություն ունեն և օգնում են ավելի լավ ճանաչել երեխաներին ու հասկանալ նրանց հետաքրքրությունները:

Ընթերցանության ճիշտ կազմակերպումը ենթադրում է նաև հիգիենայի կա-
նոնների կիրառում և պահպանում: Այն պետք է զուգակցել երեխայի գործու-
նեության մյուս տեսակների՝ ուսման, խաղի և հանձնարարությունների կատարման հետ: Անհրաժեշտ է հետևել, որ երեխան կարդա գիտակցված, հասկանալով, արտահայտիչ, ճիշտ ու սահուն որպեսզի զարգանան նրա ընթերցողական կարողությունները: Պառկած վիճակում, թույլ լուսավորության տակ կարդալն ազդում է տեսեղության վրա: Պետք է արգելվի քնելուց առաջ ընթերցելը, որովհետև գրքից ստացած տպավորությունների պատճառով խաթարվում է քունը:

Ընթերցանության նկատմամբ սեր արթնացնելու գործում կարևոր նշանա-
կություն ունի բանավոր խոսքի զարգացումը: Երբ երեխան կարդում է որևէ հեքիաթ կամ պատմվածք, հարկավոր է նրան առաջարկել պատմել կարդացածը՝ հետևելով սեփական խոսքին

<< Գիրքը մեծ դեր է խաղում երեխայի հոգևոր կյանքում, մանավանդ այն ժամանակ, երբ նա տիրապետում է կարդալու տեխնիկային, և ինքն է սկսում կարդալ: Ընթերցանությունը երեխայի համար դառնում է մի պատուհան, որի միջոցով նա տեսնում ու ճանաչում է աշխարհն ու ինքն իրեն >> [6, էջ 79]:

Այժմ մշակվում են ժամանակակից բազմաթիվ հնարներ. << Փոխգործուն գրառումների համակարգ >>, << Կանխագուշակումների աղյուսակ >>, <<Քառաբաժան >>, << Կրկնակի գրառումների օրագիր >> և այլն [4, էջ 27-36]:

Այս հնարների միջոցով աշակերտներն ավել հաճախ են ընթերցում ինքնուրույն կամ խմբովին: Սրանք նպաստում են կարդալու գործընթացի արդյունավետությանը: << Չափազանց կարևորվում է ուսուցման նպատակներից ու կանխատեսված արդյունքներից բխած մեթոդների ճիշտ ընտրության և կիրառության կարողությունը >> [4, էջ 106]: Ստեղծված

հնարները նախատեսված են դասի տարբեր փուլերում՝ խթանման, իմաստի ընկալման և կշռադատման կիրառելու համար: Այս հնարի անտեղի օգտագործումը կխոչընդոտի ուսուցման գործընթացի հաջող իրականացումը: Իսկ որոշ հնարների կիրառությունը դժվար կլինի, եթե աշակերտները չտիրապետեն լավ կարդալու տեխնիկային:

Ընթերցանության դասերին կիրառվող մեթոդները

Տարրական դասարաններում առավել նախընտրելի է հանձնարարել աշակերտին ընթերցել հեքիաթներ, առակներ, բանաստեղծություններ, անվանի մարդկանց մասին և նրանց մասին ասույթներ, պատմվածքներ, հայրենիքի նշանավոր մարդկանց մասին տեղեկություններ, լեգենդներ, ավանդազրույցներ և այլ փոքր ծավալի ստեղծագործություններ:

Կարելի է ընտրել այնպիսի բնագրեր, որից աշակերտը կիմանա, կճանաչի ազգային արժեքներն ու մշակութային գանձերը, կգնահատի գրքի դերը անհատի և ժողովրդի կյանքում, կձգտի սիրով, խնամքով և հոգածությամբ վերաբերվի գրքին, իմանալ գրադարանից օգտվելու կանոնները, խնամքով վերաբերվել գրադարանի գրքերին: Արժևորի համախմբվածությունն ու միասնությունը, կարևորի ուրիշին հարգելու հատկանիշը, գնահատի արդարամտությունը: Մերժի բացասական հատկանիշները, անտարբերությունը, եսասիրությունն ու վերաբերմունք դրսևորի դրանց նկատմամբ:

Ընթերցելու կարողությունը հնարավոր է զարգացնել՝ օգնելով երեխային տեքստն ընկալել քայլ առ քայլ: Հենս սա էլ անում է մեթոդը: Այն հնարավորություն է տալիս մոդելավորել ընկալումը խթանող ընթերցանության գործընթաց՝ երեխաների հետ քայլ առ քայլ առաջ գնալով տեքստի հատվածներով, վերլուծելով և եզրահանգումներ անելով:

Այս մեթոդով աշխատելու համար շատ կարևոր է ընտրել այնպիսի տեքստ, հեքիաթ կամ պատմություն, որին երեխաները ծանոթ չեն: Տեքստը պետք է բաժանել տրամաբանական մի քանի մասերի, յուրաքանչյուր մասից հետո դադար է տրվում, որի ժամանակ պետք է որոշակի հարցադրումներով խթանել քննարկումը: Կարևոր է, թե որտեղ կընդհատվի հեքիաթը, որպեսզի սովորողը կարողանա հետաքրքիր ընթացք հորինել և հետաքրքրությամբ ու անհամբերությամբ սպասել հաջորդ հատվածին: Իր գործը և բնագիրը համեմատելու ցանկությունը սովորողի մոտ հեքիաթի շարունակությունը ընթերցելու լրացուցիչ խթան է հանդիսանում:

Երեխաների միտքը և երևակայությունը անսահման են, հորինած պատմությունները՝ հետաքրքիր ու անսովոր: Կարևոր է, որ երեխան կարողանա սեփական միտքը ձևակերպել՝ գտնել համապատասխան բառեր, արտահայտություններ, ապա գրանցել, իսկ հետո՝ ներկայացնել: Երեխաները պակաս հետաքրքրությամբ չեն լսում իրենց հասակակիցների հորինած պատմություններն ու հեքիաթները: Երեխաներին հասակակիցների ստեղծագործություններն ավելի են հետաքրքրում ու զարմացնում, ծիծաղեցնում ու ոգևորում: Հորինած պատմությունը գրելուց հետո երեխան այն ներկայացնում է՝ կարդում, նկարում, պատրաստում իր հեքիաթի նկարազարդ էջը: Մյուս երեխաները հետաքրքրությամբ լսում են, հարցեր տալիս իրենց հեղինակին: Հեքիաթի հորինումը կարելի է կազմակերպել կշռադատման փուլում, երբ երեխաները ամփոփում են իրենց պատմությունը կամ հեքիաթը և վեր են հանում գլխավոր միտքը:

Ինքնուրույն ընթերցանության ժամանակ, ինչպես նաև մայրենիի դասավանդման ընթացքում կարելի է կիրառել հետևյալ մեթոդները՝

- ուղղորդված ընթերցանություն
- ընտրովի ընթերցանություն
- կրկնակի գրառման օրագիր
- ընդհատված ընթերցանություն:

Մեթոդի ընտրությունը կախված է թեմայից և նպատակից: Նույն թեման ուսումնասիրելիս կարելի է կիրառել տարբեր մեթոդներ՝ կախված նպատակից:

Տեքստի հիմնական գաղափարը հասկանալն ու առանձնացնելը ամենակարևոր հմտություններից է, իսկ տեքստի կառուցվածքային-իմաստային մասերը՝ **սկիզբ**, **ընթացք**, **ավարտ** տարբերակելը պարտադիր է յուրաքանչյուր երեխայի համար:

Երեխաները պետք է տարբերակեն նաև կարդացած տեքստի հնչերանգը՝ պատմողական է, հարցական, հրամայական, թե բացականչական: Աշակերտների միջև պետք է ծավալել զրույց, որպեսզի կիսվեն իրենց տպավորություններով: Այդպիսի զրույց կարդացածի շուրջ կարելի է կազմակերպել թե՛ դասի ընթացքում, թե՛ դասից դուրս:Մեթոդի օգնությամբ կարելի է կազմակերպել հետաքրքիր մտքերի փոխանակման մթնոլորտ, այնպես, որ երեխաները հարգեն միմյանց կարծիքներն ու տեսակետները:

Հայտնի փաստ է , որ ընթերցանության կարողությունների ձևավորման համար հիանալի միջոց է բարձրաձայն ընթերցումը, որը հնարավորություն է տալիս լսելու սեփական խոսքը, բարելավելու նրա արտահայտչականությունը: Խոսքի արտահայտչականության զարգացման գործում անգնահատելի է դերերով կարդալը և բնագրի դրվագների , խնդուկների , մանրապատումների բեմադրությունը: Դրանց մեծ տեղ է տրված վարժանք - առաջադրանքներում, որոնց անցկացման նպատակն է նպաստել աշակերտների կարդալու կարողությունների զարգացմանը, ինչպես նաև դյուրամարս և սահուն դարձնել ընթերցվող նյութի միավորների աստիճանականացումը՝ տառ-բառ- բառակապակցություն-նախադասություն, ինչպես նաև լուռ ընթերցումից բարձրաձայնին անցումը: Վարժանք-առաջադրանքներն իրենց բնույթով դիդակտիկ խաղերն են, որոնց կատարումը հաճույք է պատճառում երեխաներին: Խաղը ցանկացած ուսումնական գործընթաց դարձնում է հետաքրքիր և հաճելի: Անգամ ամենաթույլ երեխան խաղի տեսքով կազմակերպված դասին հաճույքով է մասնակցում: Հասկանալով կարդալու կարողության ձևավորման համար

օգտակար է կիրառել մեթոդը: Այս մեթոդի հիմնական բաղադրամասերն են՝ զրույցը, բառային աշխատանքը, նյութի մշակումը, բովանդակության վերարտադրումը և ամփոփումը կամ տրամաբանական եզրակացությունը:

Դասարանում կատարվող յուրաքանչյուր նյութի ուսումնասիրությունը մենք ավարտում ենք ամփոփումով: Բնագրի վրա տարվելիք աշխատանքներն ավարտելուց հետո այն ամփոփում ենք ՝ հիմնականում կանգ առնելով երեք կարևոր հարցերի վրա, դրանք են՝

ա) նյութի ուսումնասիրությունից ստացած գիտական, ճանաչողական նոր տեղեկությունները,

բ) նյութից հանվող դաստիարակչական-բարոյական հետևությունները,

գ) նյութի լեզուն՝ բառերը, դարձվածքները, արտահայտությունները:

Երեխաների մոտ ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն է առաջացնում ընտրովի ընթերցանությունը: Այս դեպքում արդեն ընտրված ստեղծագործությունից առանձնացվում է մի հատված կամ պարբերություն: Ընտրովի ընթերցանության ժամանակ աշակերտը ուսուցչի հանձնարարությամբ առանձնացնում է այս կամ այն հերոսի խոսքերը կամ այն հատվածը, որը իրեն ավելի է դուր գալիս և այլն: Սա ստիպում է աշակերտին ոչ թե մեխանիկորեն կարդալ, այլև մտածել կարդացածի շուրջ, օգնում է ևս մեկ անգամ վերլուծել նկարագրված դեպքերը, տրամաբանել ու նոր ընտրել ու կարդալ տեքստի որոշակի հատվածը:

Պետք է ուշադրություն դարձնել կարողություններին և հմտություններին, որպեսզի աշակերտը կարողանա սահուն և հասկանալով ընթերցել հանձնարարված նյութը, տրամաբանական հաջորդականությամբ վերարտադրել պատմության դեպքերը, նկարագրել և բնութագրել գործող անձանց, տրամաբանված ինքնուրույն խոսք կառուցի, ներկայացնի իր հնարավոր գործողությունները համանուն իրավիճակում, գործնականում կիրառի բառակազմական հմտությունները:Կարևոր է կարդացած գրականությունից նրա մոտ ձևավորել ճիշտ արժեքային համակարգ, գնահատի գործող անձանց հատկանիշները , վերաբերմունք դրսևորի դրանց

նկատմամբ, կարևորի մարդասիրությունը, ազնվությունը, սրտացավությունը և այլն:

Աշակերտների տրամաբանական, զգացմունքային և արտահայտիչ ընթերցելու կարողությունը մեծապես կախված է այն բանից, թե նրանք խորությամբ և ճշտությամբ ընկալել և հասկացել են ընթերցած ստեղծագործության գաղափարը, բովանդակությունը, ենթատեքստը, տեղի ունեցող դեպքերը, դրանց միջև պատճառահետևանքային կապերը, ինչպես և հեղինակի վերաբերմունքը հերոսների նկատմամբ:

Ինքնուրույն ընթերցանության դասի ժամանակ կան մեթոդներ, որոնք հարմար են կիրառել խթանման փուլում՝

- Մտագրոհ
- Խմբավորում
- Պրիզմա
- Հինգ րոպեանոց շարադրանք
- ԳՈՒՍ աղյուսակի առաջին և երկրորդ սյունակները:

Այս մեթոդներն ու մեթոդական հնարները կօգնեն ընթերցանության ուսուցմանը: Հարմար են կիռառել իմաստի ընկալման փուլում հետևյալ մեթոդները՝

- T-աձև աղյուսակ
- Գաղափարների քարտեզագրում
- Վեննի դիագրամ
- Փոխգործուն նշանների համակարգ
- Բանավեճ
- Զրույց
- Համառոտ դասախոսություն
- Ապագայի անիվ
- Խորանարդում
- Խճանկար
- Ուղղորդված ընթերցանություն

Այս մեթոդները հարմար է կիրառել ոչ միայն ինքնուրույն ընթերցանության ժամանակ , այլ նաև մայրենիի դասերին: Կշռադատման փուլում հիմնականում կիրառվում են հետևյալ մեթոդները՝

- Քառաբաժան
- Կողմ-դեմի աղյուսակ
- Խմբային աշխատանք
- Բանավեճ

Ընթերցանության ժամանակ և գրքի հետ աշխատելիս կարելի է կիրառել տարբեր մեթոդներ, կախված նյութի բովանդակությունից և նպատակից:

Այսօր պետությունը դպրոցին լուրջ հանձնարարություն է տվել. . <<Հասարակությունը ուսուցման արդյունքում պետք է ստանա զարգացած, կիրթ, բարոյապես ձևավորված և սոցիալապես ակտիվ քաղաքացիներ, որոնց համար սովորելու ձգտումը անհատի կայուն որակներից է>>: Բոլոր ժամանակների և ժողովուրդների հանճարեղ գրողներին ու բանաստեղծներին մտահոգություն է պատճառել մարդկանց բարքերի անկումը, և նրանք միայն մի դեղ են առաջարկել՝ ինքնակատարելագործում: Դաստիարակչական գործընթացը կառավարել նշանակում է ոչ միայն զարգացնել ու կատարելագործել մարդու մտավոր ու ֆիզիկական բնածին ունակությունները, այլև ձևավորել անընդհատ ինքնակատարելագործման պահանջմունք: Այդ պահանջմունքի բավարարումն անհնար է առանց ընթերցանության: Կարևորագույն խթանը ընթերցանության նկատմամբ հետաքրքրություն առաջացնելն է: Եթե աշակերտը ունի դրդապատճառներ , ուրեմն ուսումնական գործունեությունը կհաջողվի:

Եզրակացություն

Ուսուցչի դերը ընթերցանության դասերին շատ կարևոր է և ունի որոշիչ դեր երեխայի հետագա ամբողջ կյանքի համար: Ընթերցանություն սիրող ուսուցիչն անպայման կանի ամեն ինչ, որ աշակերտը ևս սիրի ընթերցանությունը : Որպեսզի ընթերցանությունը երեխայի համար չդառնա փորձություն և պատիժ, նա պիտի հաճույքով և վայելքով ընթերցի: Հետագայում Ռաֆֆի, Մուրացան, Շեքսպիր կարդալու համար երեխան նախ պետք է շփվի մանկական գրականության հետ: Ճիշտ է կան օժտված երեխաներ, որոնք իրենք են ընտրում և մեծ հաճույքով ընթերցում են, սակայն կլինեն նաև երեխաներ, չնայած ուսուցչի բոլոր ջանքերին, ընդհանրապես չեն կարդա: Բայց դա ուսուցչին չպիտի կանգնեցնի, որովհետև նրա աշխատանքից է կախված կհասկանա արդյոք երեխան իր կարդացածը, թե՝ ոչ: Ընթերցանության դասին ամբողջ լավ մանկական գրքերը ընթերցել հնարավոր չի և ընթերցանության ցանկից միայն մեկը կամ երկուսը կհիշվի, սակայն եթե մեկն էլ հիշվի դա արդեն ուսուցչի քրտնաջան և պրոֆեսիոնալ աշխատանքի արդյունքը կլինի: Իհարկե, ցանկալի կլինի, որ այդ աշխատանքն ապարդյուն չանցնի: Ուզում եմ նաև նշել տարրական դասարանների ուսուցչի դերի մասին: Գաղտնիք չէ, որ դասվարը հեղինակություն և օրինակ է իր աշակերտի համար և դրանից պետք է օգտվել, ու անձնական օրինակով ցույց տալ գրքի նկատմամբ սերը, հետաքրքրությունը: Չէ որ հետաքրքրությունն է ծնում հետաքրքրություն, իսկ կարդացողը ծնում է կարդացող: Այդ պատճառով ուսուցիչն ինքը պիտի գրագետ պրոֆեսիոնալ ընթերցող լինի և չնայած ծանրաբեռնվածությանը պետք է ոչ միայն գտնի ժամանակ գիրք ընթերցելու, այլ նաև մտածելու:

Գրականություն

Օգտագործված գրականության ցանկ

- Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, << Զանգակ 97 >> , 2009:
- Գյուլամիրյան Ջ., Տարրական դասարաններում արտադասարանային ընթերցանության կազմակերպման խնդիրները և մեթոդները, <<Նախաշավիղ >>, 2001,1, էջ 22-26:
- Դավթյան Մ. , Ընթերցողական հմտությունների ձևավորումը դպրոցի հույժ կարևոր խնդիրներից է, << Մանկավարժություն >>, 2006, 3-4 էջ 62-71:
- Խարազյան Ռ. , Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում, << Աստղիկ>>, Երևան-2003
- Ղարիբյան Ա. , Ամիրյան Ա. և ուրիշներ, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1955
- Վորոնցով Վ. Լ., Բանականության սիմֆոնիա, << Հայաստան >>, Երևան, 1981: